Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյս միաբաններէն հոգեզգօն

ԳԻՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐԵՄԵԼԻՔԵԱՆՑ

անցեալ Մարտ ամսոյ 14ին՝ երկարատեւ անբուժելի հիւանդութիւնից յետոյ՝ իւր երկրաւոր կեանքը կնքեց Երեւան քաղաքում՝ ուր Վեհափառ Հայրապետի հրամանաւ գնացած էր օգափոխութեան համար։

Հանգուցեալը 1862 թուականում կուսակրօն հոգեւորականութեան կարգը մտնելով՝ 1864 թուականում Ս. Ստաթէի վանքում ձեռնադրեցաւ կուսակրօն քահանայ եւ ընկալաւ վեղար՝ երկար միջոց կատարեց Նոր—Նախիջեւանի եւ Խրիմու Ս. Խաչի համանուն վանքերում վանահայրութեան պաշտօններ. երկու տարուայ չափ եւս վարեց Բեսարաբիոյ եւ Ն. Նախիջեւանի թեմի վիճակային Ատենի նախանդամութեան պաշտօնը։ 1876 թուականից սկսեալ մինչեւ իւր մահը բարեջանութեամբ կատարեց Մայր Աթոռոյս վանական—տնտեսական Կառավարութեան անդամութեան բազմազբաղ պաշտօնը՝ որով արժանացաւ Ազգիս Վեհափառ Հայրապետի քաղցր ուշադրութեանը եւ 1879 թուականում Եպիսկոպոսական բարձր աստիճանին։

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի Ազգիս արժանաւոր հանդիսիւ եւ յուղարկաւորութեամբ Մարտի 17ին հանգուցելոյ մարմինը ամփոփեցաւ Երեւանայ Ս. Սարգիս Եկեղեցւոյ որահում։

Հանգուցելոյ հոգւոյն հանգիստ եւ երկնից սուրբ արքայութիւն կմաղթեմք Ամենաբարձրելուց։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ